ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
Պ-180[1]-02.03.2022-ՖԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վիճակախաղերի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-3-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի զ) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«զ) շահողի առաջին իսկ պահանջով տրամադրում է շահումը՝ օրենքով սահմանված ձևով.»:
Հոդված 2. Սույն Օրենքի 5.2-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Արգելվում է տոտալիզատորի մասնակիցների հաշիվներին դրամական միջոցներ մուտքագրել և ելքագրել կանխիկ եղանակով: Նշված հաշիվները համալրվում են, և հաշիվներից գումարը կանխիկացվում է միայն ~~բանկային հաշվով կամ վճարային քարտով կամ էլեկտրոնային փողի հաշվով~~ անկանխիկ եղանակով~~ նախածեռնված վճարմամբ~~: Անմիջականորեն (խաղասրահի միջոցով) խաղացողների կողմից կատարվող խաղադրույքների կատարումը կամ կազմակերպիչների կողմից խաղացողներին տրված անհատական խաղային քարտերին դրամական միջոցների համալրումն իրականացվում է~~ բանկային հաշվով կամ վճարային քարտով կամ էլեկտրոնային փողի հաշվով՝~~ անկանխիկ եղանակով~~ նախածեռնված վճարմամբ~~:»:

Հոդված 2. Սույն Օրենքի 5.2-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.
«4. Օրենքով սահմանված անկանխիկ գործարքները պետք է իրականացվեն միայն բանկային հաշիվների կամ քարտերի միջով:»:

Հոդված 3~~2~~. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
2. Սույն օրենքի ~~1-ին~~2-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները ուժի մեջ են մտնելում վեց ամիս հետո~~սահմանված էլեկտրոնային փողին վերաբերող կարգավորումները գործում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո վեց ամիս ժամկետով~~: